ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ<<ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ա/Ձ Լևոն Սիմոնյանին
(ք Հրազդան Երևանյան 7/12,
Էլ. փոստ՝ meşropsargsyan@mail.ru)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագրի 17-րդ չափաբաժինը միակողմանի լուծելու մասին

Ծաղկաձոր համայնքի «Ծաղկաձոր քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի /այսուհետ՝ Պատվիրատու/ և Ա/Ձ Լևոն Սիմոնյանի /այսուհետ՝ Ընկերություն/ միջև 16.01.2023թ. կնքված«**ԾՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-23/1-1**»ծածկագրով **սննդամթերքի մատակարարման** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

26.01.2023, 07.02.2023 և 10.02.2023թթ.Պատվիրատուն էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև բանավոր կերպով դիմել է Ընկերությանը՝ «Տավարի միս»մատակարարելու պահանջով, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել, պահանջվող ապրանքը չի մատակարարվել և Ընկերությունը չի կատարել պայմանագրով նախատեսված պարտավորություններըՊայմանագրի 17-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

Պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1կետերի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Ծաղկաձոր համայնքի«Ծաղկաձոր քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանիամբողջությամբ հրաժարվում է Պայմանագրի17-րդ չափաբաժնից՝համարելով այն լուծված՝ 840000 /ութ հարյուր քառասուն հազար /ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հայտնումենք նաև, որհիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները Պատվիրատուի կողմից կնախաձեռնվի Ա/Ձ Լևոն Սիմոնյան-ինգնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Ընկերության տվյալներն օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվի ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները Պատվիրատուի **1510003052690100**հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ծաղկաձոր համայնքի «Ծաղկաձոր քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ տնօրեն *Ա.Ասատրյան*